

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱՅԱՅՆ

### ԽԱՌԱԴՈՎԿԱՀԱՅ ԳՈՐԳԱՐՎԵՍՏՈՒՄ (13—15-ՐԴ ԴՐ.)

Կապադովկիան հայաշատ շրջան է եղել հնուց ի վեր: Այդ իսկ պատճառով հունական աղբյուրներում՝ և բարձր՝ 'Արմենիա', հոռմանականում՝ Armenia Minor<sup>2</sup>, բյուզանդականում՝ Thema Armeniacon—Հայկական բանակաթեն<sup>3</sup>, իսկ հայկական աղբյուրներում ՓՈՔՐ ՀԱՅՔ է անվանվել իր Առաջին և Երկրորդ Հայքերով<sup>4</sup>:

11-րդ դ. Վասպորտականից Արծրուների, ապա Ամինց և Կարսից Բագրատուներից զանգվածային բոնագաղթերով հայերն առավել ևս շատացան պատմա-աշխարհագրական լայն տարածով Վասպովկիայում: Հետևաբար, սեղովկան ներխուժումից առաջ, նրանց տիրապետության շրջանում (1074—1307 թթ.) և նրանց իշխանության քայլայումից հետո տվյալ տերիտորիայում թե՛ն՝ գերակշռող ազգաբնակչությամբ և թե՛ն՝ աշխատանքային ձեռներեցութամբ երկրի բազմանյուղ արհեստների, արվեստների և ներքին ու արտաքին առեվտրի բնագավառներում հայերն ունեցել են

<sup>1</sup> Պրկուպիոս Կեսարացի, Պատերազմների մասին, թարգմ. Հ. Բարթիկյան, Երևան, 1970, էջ 22, 44, 95, 193, 299:

<sup>2</sup> Полибий, Всеобщая история, 1895: Նաև Մարк Туллий, Речи в двух томах, 1962, I, § 14:

<sup>3</sup> Կոստանդին Միքանածին, Բանակաթեների մասին, թարգմ. Հ. Բարթիկյան, Երևան, 1970, էջ 167: Նաև Հ. Ածոնի, Արմենия в эпоху Юстиниана, Ереван, 1971.

<sup>4</sup> Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 96 և 117: Նաև Ս. Երևանյան, Հայաստանը լատ «Աշխարհացուց»-ի, Երևան, 1968, էջ 100:

զգալի մասնակցություն և մեծ դեր խաղացել դրանց հետագա զարգացման գործում: Տեղում հայերը զարգացրին նաև ինքնատիպ մի գորգարվետա, որը հայ մշակույթի անբաժան մասն է կազմում, բայց անտեսված է մինչև օրս: Կոնհայում, Սերաստիայում, Կեսարիայում և այլ շրջաններում հայերի կողմից պատրաստված բարձրարվեստ գորգերի մասին ականատեսի հանգամանքով հիշատակում են 13-րդ դ. եվրոպացի ճանապարհորդ Մարկո Պոլոն<sup>5</sup> և ուրիշներ: Մասնագիտական գրականության մեջ 13—15-րդ դ. վերագրվող այդ գորգերից որոշ թվով հայտնաբերվել են Կոնհայի և Բեյշեհիրի մզկիթներում, ինչպես նաև Ֆուստարի (հին Դամիրե) պեղումներից: Բայց կապադովկահայ այդ գորգերը վերագրում են սեղովկ-թուրքերին և եվրոպական թանգարաններում դասակարգում իսլամական արվեստի բաժնում<sup>6</sup>:


Վերոհիշյալ գորգերի պատմա-համեմատական ուսումնասիրությունը բացահայտում է, որ նրանց հորինվածքը, զարդարութիվների արտաքին ձևն ու բովանակությունը, ինչպես նաև նախշերի տեղադրության իմաստավորումը սերտ առնչություն ունեն հայկական ոճով և հայ վարպետ-արհեստավորների ձեռքով շինված սեղովկան աշխարհիկ ու հոգևոր բնույթի բազմաթիվ

<sup>5</sup> Մարկո Պոլո, Путешествие, Ленинград, 1940, срп. 17.

<sup>6</sup> Oktay Aslanapa ve Yusuf Durul, Selçuklu halıları, İstanbul, 1973. Նաև Kurt Erdman, Oriental carpets, Tübingen (Germany), 1960, p. 17.

կառուցների մետք: Դրանց համար որպես նախօրինակ ծառայել են պատմական Հայութանի ավելի վաղ շրջանի շինարարական ավանդույթները, վարպետությունն ու ուժերը<sup>7</sup>: Հետևաբար, այդ գորգերի զարդա-

ձևերում, որոնք նախորդում են սեղուկան ներխուժմանը: Վերոնիշչալ գորգերի զարդանոտիվների արուաքին ձևերը, գաղափարական բովանդակությունն ու նրանց տեղադրման իմաստավորումը բացահայտում



Նկ. 1.

ձևերի բնօրինակներին հանդիպում ենք վաղ միջնադարյան հայկական ճարտարապետական զարդաքանդակներում, խաչքարային արվեստում, հայկական մագաղաքյա ձեռագրերի մանրանկարչության և կիրառական այլ արվեստների բուսական, կենդանական և երկրաչափական զարդա-

<sup>7</sup> A. Saladin, Manuel d'Art Musulman: L'Architecture, Paris, 1907, t. 2, p. 456.


<sup>8</sup> N. F. Lynch, Armenia, vol. 2, 1901, London, page 289.

են նրանց հայկական բովանդակությունը և հայկական ձեռարվեստի ստեղծագործությունները լինելը:

Սեղուկան անվանված կապարովկահայ այդ գորգերի էական հատկանիշներից մեկն էլ այն է, որ դրանց մեջ հաճախակի են օգտագործված բազմատեսակ ոճավորված բազմաթիվ ԽՍ. ԶԱ. ԶԱ. ՐԴ. Ե. Ր. (տես գորգանկարներն ու գծանկարները): Ջլա մի գորգ, որի վրա օգտագործված չի են ԽՍ. ԶԱ: Ծիշտ է, խաչանիշը միայն բրիտոնության սեփականությունը չի եղել, և

հնուց ի վեր այն խմատավորել է բնության չորս ուժերը, բայց քրիստոնեությունը մեռ բազմաթիվ սովորութենարի հետ մեկտեղ յուրացրեց նաև խաչանիշը:

Թակա քոչվորական հորդաների հաճախակի արշավանքներին, ճնշմանն ու թալանին, իր ազգային գոյությունը շարունակելու համար որպես պալքարի միջոց անպաշտ-



Նկ. 2.

Այն սրբագրծեց և խմատավորեց Քրիստոսի խաչելության խորհրդով: Նոր բովանդակություն հատորդեց նրա ձևին և խաչը դարձեց իր խորհրդանիշը: Ողջ միջնադարը հագեցված է քրիստոնեական գաղափարախոսությամբ, որի աչքի ընկնող կենուրներից էր հայաշատ Կապարովկիան:


Ծրչափակված օտար տարրերով և են-

պան հայն ապավինեց խաչին՝ գոյության կովում որպես Շեցուկի: Ինչպես քրիստոնեությունը, այնպես էլ նրա սիմվոլիկ արտահայտությունը հանդիսացող խաչը հայոց խորապես ազգայնացրեց՝ նրան հաղորդելով ազգային նոր ձև և նոր բովանդակություն:

Օտարության մեջ թե հայրենիքում, իր

անձնական թև հավաքական կյանքում, բազմապիսի դժվարությունների և արհավիրքների դեպքում հայը, որպես գոյության և ինքնաշխատապանության միջոց, հավատաց խաչի ստովածային գերիզորությանը, նրանով ամրապնդեց ու համախմբեց իր ազգային ֆիզիկական ու հոգեկան ոժերը՝ կյամքի անհավասար պարարտում:

Միջնադարում ազգային պետականությունը կրոցրած և համախի հավամի տիրապետության տակ բռնի հպատակեցված հայ ազգաբնակչության համար խաչանիշի հաճախակի օգտագործումը միաժամանակ տիրապետությունը տարբերվելու գործնական նպատակ է ունեցել և այն դրոշմել է իր



Նկ. 3.

ստեղծագործություններում: Ավելի՞ հայ եկեղեցին ունի խաչաձև հատակագիծ: Հայ շինականն իր դաշտերի բարիքը համայստող ցորենից խաչքրին է կազմում: Հայ մամիկն իր ամենօրյա հացը թիեկին խմորի վրա խաչանիշ է անում: Հայն իր որդիների ամուսնությունը նվիրագործում է խաչանիշով՝ որպես սերունդների ժամանգործյան և հավերժության նշան: Խաչ է բանդակում եկեղեցների պատերի և պատմական այլ հուշարձանների վրա: Խաչքրային բազմարվանդակ ստեղծագործություններ է կերտում որպես ազգային տորահատուկ արվեստ: Փայտի, մետաղի և համապատակու մշակման ժամանակ խաչանիշն է օգտագործում որպես զարդարություն: Եկեղեցական անորթների և այլ առարկաների վրա խաչանիշ է դրոշմում: Քրիստոնեացած խաչն բազմաշարչար հայ ժողովուրդը նույնիսկ տիեզ ազգային տորահատուկ նկարա-

գիր՝ հավատակից այլ ժողովուրդներից ևս տարբերվելու, չհոգվելու նպատակով: Իր ողջ պատմական կյանքի ընթացքում հայ ժողովուրդը ձգտել է ամեն կերպ պահպանելի իր ազգային ինքնուրժունը, առանց սակայն այլաներժ լինելու:

Հայ ժողովուրդի համար խաչը չի խորհրդանշել միայն շարչարաններ, այլ միաժամանակ նրա մեջ տեսել է ապագայում հարության, հույսի և ազգային վերածննդյան գաղափարի անհորոշակ հավատքը ու գոյատերու համար պարարի վճռականությունը: Այս պարմաներում հայն իր դրոշմած, բանդակած և գործած խաչանիշին տալիս է ազգային տորահատուկ իմաստավորում: Բնունարար ազգային բովանդակությունն է հաղորդում նրան և լայնորեն կիրառում իր կենցաղում:

Հայ ազգային բնորոշ սիմվոլիկ այս մուսանդողությունն իր լայն արտահայտությունն է գտել ազգային զարդարվեստում և կիրառական արվեստի բոլոր բնագավառներում, ովյալ դեպքում հատկապես գորգարվեստում: Գորգն իր ամբողջական հորինվածքով, զարդարվեստում և նրանության իմաստավորումով, ինչպես նաև գույների ընտրությամբ և հարատիքամբ իր ժամանակի և միջավայրի գեղարվեստական մուածողության, պատկերացման ու ճաշակի մարմնավորումն է: Բնունարար, զարդարական ասպեկտները սինթեզվում են կոնկրետ ոճական և արտահայտչական ձևերի մեջ:

Որպես հայկական գորգերի ամենակարևոր հատկանիշներից մեկը ախյուրքահայ բանանք Ս. Սագգամօն նշում է. «...այդ գորգերի վրա գոյությունն է որոշապես գծված խաչերի զոր ի զոր փնտրելու ենք պարակական գորգերի վրա և որոնց շատ թիշ ենք հանդիպում կովկասան այն գորգերի վրա, որոնք հայկական շրջաններից շեն»<sup>9</sup>: Կապադովիլիան գորգերում խաչանիշների բազմազանությունն օրինաչափորեն արդյունքն է գեղարվեստական տարբեր մուածողության և հնարքների: Հայր պատմության տարբեր ժամանակներում և միջավայրերում իր բանդակական տերերի համար, ինչպես և առևտրական հպատակությունների գործական անորթների վերաբերյալ գորգեր: Բայց գործել է իր գիտեցած ձևով՝ ազգային ոճով և զարդարվեստի ալիսնույթներով, անշուշտ հաշվի է առել նաև տիրապետողի և պատվիրատուի ճաշակն ու ցանկությունները: Այժմ սեղշուկան ան-

<sup>9</sup> A. Sakisian, Pages d'Art Arménien, Paris, 1940, page 27. Նույն Հ. Գյուրջյան, Գորգը Հայոց մատ, Վենետիկ, 1947.

վանկած կապադովկահայ այդ գորգերում խաչազարդերի տիրապետող առկայությունն ինքնին մատնում է իր հսկական տերերին:

Կապադովկահայ այդ գորգերում ֆանատիկ իպամ տիրապետողների զարդութից խուսափելու համար հայր հաճախ ոճավորել և անձանաշելի դարձնելու չափ ձևափոխել է խաչը, նոյնիսկ հաճախ համարել է այլ զարդաձևերի հետ. բայց ուշադիր դիտողը կունենի հսկան զարդաձևը՝ խաչանիշը: Սեղովկահան կոչված բոլոր գորգերն են, առավել թե պակաս չափով, իրենց զարդաձևերում անսպայման ունեն խաչ: Բայց առհասարակ զարդարվեստում և տվյալ դեպքում կապադովկահայ գորգարվեստի ազգային նկարագիրը չի բացահայտվում միայն տարբեր ձևերի բազմաթիվ խաչազարդերի հաճախակի օգտագործումով, այլ ամենակարեւորն այն է, որ նրանք իմաստավորվում և ազգային յուրահատուկ բովանդակություն են ստանում իրենց օգտագործման տեղով և նրանց հատկացված դերով: Դժվար թե խամ արթեստավորը, մոռացույցան տալով իր բուն ատելությունը, խաչին հատկացներ այնքան կարևոր տեղ...:

Սեղովկահան անվանված կապադովկահայ այդ գորգերի արտաքին ու ներքին գոտեզրերում խաչազարդերի շարանը հաճախ է օգտագործված որպես պահպանիչ: Նրանց դեր է վերապահկած գորգը՝ հայի տունը, պահպանել դժբահան պատահարներից ու չար աչքերից (գծանկարներ՝ 1, 2, 3, 4, 6, 7, 8, 10):

Կենտրոնական գորգադաշտում տեղադրված բուսական, կենդանական և երկրաչափական հարաբարդույթուններով հարրստացած խաչանիշ զարդամոտիվները ներկայացնում են մեկ-մեկ կենաց ծառեր: Նրանք իմաստավորված են կյանքի հավերժության և անմահության գալափարով (գծանկարներ՝ 21, 22, 23, 24):

Ոճավորված եռագնդան զարդամոտիվները և վարսանդապտղային գծայնացված զարդաձևերը նվիրագործված են խաչանիշերով (գծանկարներ՝ 14, 15, 16, 17): Թեփատարած արծիվ հիշեցնող ոճավորված քառանկյունը կամ ութանկյունը զարդարված է կովկասյան կեռազարդերով, իսկ վրան է դրոշմված է սովորական խաչանիշը կամ կեռ խաչը, մի դեպքում պոչին (գծանկար 18), այլ պարագային՝ կրծքին կամ կոնակին (գծանկարներ՝ 19 և 20): Տարբեր տիպի խաչեր են պատկերում գծանկարներ 5, 9, 11, 12 և 13-ը:

Ոճավորված վիշապը ամենահատկանշական զարդամուխտն է սեղովկահան անվանված կապադովկահայ գորգարվեստում, որը

հետագայում շարունակվել է ոչ միայն կովկասյան-հայկական վիշապագորգերում, այլև 16—18-րդ դարերի անատոլյան ընդհանուր անվան տակ ծանոթ հայկական գորգերում: Համախ հեթանոսական վիշապազարդը, իր վրա ընդունելով խաչանիշը, քրիստոնեական բովանդակություն է ստացել: Արևմտյան որոշ հեղինակներ, գծայնացված վիշապները նմանեցնելով արաբական քուֆի գրածնին, զարդամոտիվները անհինն կեր-

*Մի շարք խաչաշարք ժամանակակից գորգարվեստում  
( XIII - XIV դդ.)*




Դի. 4.

պով վերագրում են սեղովկներին և գորգերն ել դասակարգում իպամական արվեստի բաժնում:

Վերոհիշյալ գորգերում հաճախ նկարվում է բուսական և կենդանական զարդաձևերի համադրում և դեպի երկրաչափական դեկորատիվ զարդամոտիվի անցում (գծանկար 25): Կենտրոնում քարձրանում է ոճավորված կենաց ծառը: Նրա երկու կողմերում դեմ-հանդիման կանգնած են գծայնացված վիշապներ: Բայց հետագայում քրիստոնեությունը կենաց ծառը սրբագոր-

ծել է իր խաչանիշով՝ այն դրոշմելով հրաբին: Հետևաբար, այս մեկ զարդամոտիկում նեթանուական և քրիստոնեական ստածողությունները համադրվել են՝ արտահայտելով նոյն գաղափարը: Նման միտքն առավել գծայնացված-դրսորդված ենք տեսնում մի այլ զարդամոտիկում (գծանկար 27): Այսուեղ դեմ-դիմաց կանգնած երկու վիշապներից ծնված և դեպի վեր շիսող վիշապների միախառնումը ավարտվում է խաչանիշով: Հետագայում գծանկար 25-ը լիկ երկրաչափական զարդանի վե-



Նկ. 5.

րածլած օգտագործվում է անատոլյան ընդհանուր անոնով ճանոր 15—16-րդ դարերի հայկական գորգերում (գծանկար 28): Դեմուիմաց վիշապների միջև տեղակալված է նոյնական ոճավորված ձուն, որը խորհրդաշխությունը է կանքի սալուական գորգերում նշանակած գորգերում (գծանկար 26):

Իպամական սուրբ գիրքը՝ Պորանը, իր հավատացյալներին խատորեն արգելում է

մարդ կամ կենացանի Էակ Ակարելը<sup>10</sup>: Գծանկար 29-ը պատկերում է մի թոշուն-վիշապ: Նրա կովկասյան կեռազարդերով ոճավորված թևերը սկիզբ են առնում կենացանու կունակին դրոշմված հայկական Տ գրածեի հետանուական զարդանից, որը խորհրդաշխությունը է վիշապը: Միաժամանակ կենացանու մարմինը զարդարված է խաչանիշերի շարանով: Բայց առավել ուշագրավ է այն, որ կենացանին գլխին կատարի փոխարեն կրում է խաչանիշ, մի հանգամանք, որը նշում է կենացանու մատաղացու լիմելը: Տիկայ զարդամոտիկի շարանով զարդարված գորգը հայկանաբար պատրաստված է եղել եկեղեցում օգտագործելու հպատակով, բայց հետագայում, ինչ-ինչ պայմանների բերունով, հայտնաբերվել է Կոմիայի մըզկիթներից մեկում (գծանկար 29):

Խաչանիշը, գծայնացված այլ զարդանիշերի մեջ համադրված, առաջացրել է բարք երկրաչափական զարդանիքը: Նրանց նորինվածքում ևս գերակշռում են խաչառադրերը, որոնք իմաստավորում են արդ օպերատորիները (գծանկար 30, 31, 32):

Վիշապագործերի աստիճանական զարդարման մի ճյուղ մեզ առաջնորդում է դեպի խորանացորդը: Դրա փոխանցման լավագույն օրինակներից է գծանկար 33-ը: Դեմ-հանդիման կանգնած երկու վիշապների միախառնումից առաջանում է ոճավորված մի կիսաշրջանակ: Որոշ հեղինակները բունագրութիւնուն դա հմանեցնելու են փորձում խլամական մահիկի, անտևակող տրվայ զարդամոտիկի նորինվածքն ու էտրունը: Ավելին վերնից առկասի է հավատքի, ուստացուն ապագայի նույսի կանթելը, իր կողքերից առկասի երկու այլ փոքր կանյուններով, որոնց վրա ևս դրոշմված են խաչեր: Ներքում տեղադրված է մի մեծ խաչագրդ, իսկ հրամից ներքին ութանկյուն առտղագարդը, որի կենտրոնում դրվել են աշխարհով մեկ: Այժմ հարց է առաջանում դրոշմված է փոքր խաչանիշ:

Նկատի ունենանք, որ խաչը ո՞չ մի երկրում և ո՞չ մի ժամանակ իսպամի համար սիմվոլ չի հանդիսացել: Ոչ միայն սեղուկ-բուրքերից, այլև իսպամության ծնունդ տվյալ արաբներից առաջ հայերը գորգեր են գործել, ըստ արար պատմիչների վկացության, որոնք որպես կողոպսուն, որպես պետական տոռք կամ հարկ, ինչպես նաև առևտրական նախառակներով ցրվել են աշխարհով մեկ: Այժմ հարց է առաջանում: Եթե մաս-

<sup>10</sup> Մարգարեի Սուննա օրինագիրը և հրակարձիքների ժողովածում՝ Հատիսում: Տես՝ Կ. Պալյան, Եղիպատու և արարական նարտարապետությունը, 1914, Կամիրե, էջ 192:

նագիտական գրականության մեջ այդ գործերն ընդունվում են իսլամական, այև է «իսլամական աղոյթքի գորգեր», ապա իցո՞վ բացատրել խաչի այնքան բազմազան ու հաճախակի օգտագործումը և նրան հատկացված այնքան կարևոր տեղը: Ավելին՝ ինչպես հաշտվել այն գաղափարի հետ, որ իսլամ հավատացյալը ամենօրյա իր աղոյթքների ժամանակ ծովով գա խաչի առաջ և երկրպագելու ժամանակ խոնարին ու իր գլուխը անընդհատ հայ խաչնիշին... այս էլ միշտն դարերում, երբ իսլամական մոլեուսնությունն իր գագաթնակետին էր հասել:

Հետաքրքիր է նաև պատմա-լեզվական այն կաստը, որ ԽԱՉ բառը «բնիկ հայերեն բառ է» և հայերենից է փոխառյալ թուրքերեն չաչ և աղոյքչաներեն խաչ բառը՝ հայ<sup>11</sup> և օսոր<sup>12</sup>, ինչպես նաև թուրք լեզվաբաների վկայությամբ<sup>13</sup>: Հիշյալ լեզուներում նոյն բառարմատից կազմված բազմաթիվ բարդ ու ածանցավոր բառեր կան. դա հետևանքն է երկու ժողովորդների երկարաւու ու փոխադարձ շփման և համատեղ կեցության. օրինակ՝ մուտքային չաչ խաչ իմեկ կամ հայ չիկարմակ—խաչ հանել կամ խաչակնքել, գլաչ խաչլամակ կամ հաչլամակ—խաչել, հաչլամիշ—խաչեցյալ, հաչս սայ ատմակ—խաչը ջուրը գցել (հայկական եկեղեցական ջրօրինեքի արարությունը): Սակայն առավել հետաքրքրական փաստեր են հայերեն մի շարք բառերի նոյնությամբ օգտագործումը թուրքերենում. օրինակ՝ հաչուար—խաչնար—խաչվար (խաչան) կամ խաչվառ-խաչադրոց կամ եկեղեցական դրոշ<sup>14</sup>: Տվյոլիհայ (Թոգատի) շրջանի երեմնի հայաշատ գյուղերում մինչև օրս օգտագործվում է շաչ։ Խաչն ամաչուկ, գյուղական տների առիքներին խաչան դրոշված գերան», հայերենում նաև խեչակ:

<sup>11</sup> Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, 1978, Երևան, էջ 383:

<sup>12</sup> Դ. Ա. Մագազանիկ, Տուրեցկո-Ռուսական հայության արմատական բառարան, Մոսկվա, 1945, ց. 225.

<sup>13</sup> M. Ali Aćakay, Türkçe sözlük, 1959, Ankara, s. 331.

<sup>14</sup> Հին Հայկական բառարան, 1769, Վենետիկ, էջ 242:

Հաջորդ-Հաջորդեն խաչերկաթ թուրքի բերանին դրված խաչան թիթեղը: Գավառական այս բառը, ըստ Անայանի, փոխ են առել Կեսարիայի թուրքերը և Բուղները, Եվդոկիայի շրջանի թուրքերը և Սղերդի շրջանի արարեները: Հայերեն այս բառն անցել է նաև ոռուերենին կոչերգ, ուկրաիներենին, լեհերենին, լիթվաներենին և այլ լեզուների: Խամար-խաչմար, որը մենովի կթոցում խաչան դրվող փայտն է, իսկ շինարարության բնագավառում խաչալուր, որը հաշնակում է տան տանիքին գերանի փոխարեն խաչան դրվող ձող, նաև խաչ կամ հաչ, հայերեն խեչակ, որը երկնի նեցուկ է նաև բոլյուերի համար<sup>15</sup>: «Խաչ բառը,—ասում է ակոյ. Բ. Առաքելյանը,—որ հայերենից անցել է վրացերենին, աղոյքչաներենին, պարսկերենին, քրդերենին»<sup>16</sup>, նաև Կենարներական Սիհական ժողովուրդների լեզուներին և աֆղաներենին, որոնք գորգի մի տեսակը խաչեից զարդարությին պատճառով անվանում են «խաչլու Յումուտ»<sup>17</sup>, «խաչլու Բուխարա»<sup>18</sup>, «խաչլու թուրքուման»<sup>19</sup> և «խաչլու աֆղան»<sup>20</sup>: Հնուց ի վեր հայկական կիրառական արվեստների այլ բնագավառներում և հատկապես գորգարվեստում օգտագործված զարդարությունների մեջ տիրական տեղ է ունեցել խաչը:

Սեղուկյան անվանված գորգերի զարդարությունների հանգամանալից վերուծությունն ինքնին ընթերցողին հանգեցնում է այն եզրակացության, որ կապադովյան այդ գորգերը գործվել են միշնադարյան հայկական զարդարվեստի ավանդություններով և նայ վարպետ-արհեստավորների ձեռքերով:

<sup>15</sup> Աճառյան, Արմատական, Բառոր 2, էջ 384:

<sup>16</sup> Բ. Առաքելյան, Քաղաքաները և արթնատները Հայաստանում IX—XIII դր., Երևան, 1984, Բառոր 1, էջ 162:

<sup>17</sup> M. Campa na, Oriental carpets, 1969, Milan p. 136.

<sup>18</sup> O. Pictus, Oriental carpets, 1968, Switzerland, pl. XVI.

<sup>19</sup> H. Haak. Oriental rugs London, 1960, pl. 35.

<sup>20</sup> P. Liebetrau, Oriental rugs in colour, 1970, Denmark, pl. 41.

